ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 25-ին՝ շաբաթի.—*Այսօր Մայր Աթոռ ս. էջմիածին ժամանեցին Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ գեր. տ. Տիրայր եպս. Մարտիկյանը և ռումինահայ հայտնի բանասեր Հ. Ճ. Սիրունին։*

*
* *

Սեպտեմբերի 26-ին՝ հինգշաբթի.—*Այսօր հոգևոր ճեմարանի ուսանողությունը և դասախոսական կազմը մեկօրյա պտույտով մեկնեցին Սաղմոսավանք։*

*
* *

Սեպտեմբերի 27-ին՝ ուրբաթ.—*Այսօր Վեհափառ Հայրապետի հրավերով Մայր Աթոռ ժամանեցին բարերարներ պրն. Հայկ Գավուքճյանը, պրն. Տատուր Տատուրյանը և պրն. Հարություն Թաթոսյանը՝ իրենց տիկնանց հետ։*

*
* *

Սեպտեմբերի 28-ին՝ շաբաթ.—*Այսօր երեկոյան Մայր Աթոռ ժամանեց Հյուսիսային Կովկասի և Ռուսաստանի հայոց թեմերի առաջնորդ գեր. տ. Պարգև եպս. Գևորգյանը։*

*
* *

Սեպտեմբերի 29-ին՝ կիրակի.—Դ կիր. զկնի Սրբոյ Խաչի։ Տօն է Վարագայ Սրբոյ Խաչի.

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Ս. պատարագին ներկա էին նաև շուրջ 200 հայ ուխտավորներ՝ Միացյալ Նահանգներից, Բրազիլիայից, Արգենտինայից, Ֆրանսիայից։

Հավարտ ս. պատարագի Վեհարանում Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել և Իր օրհնությունը բաշխել ուխտավորներին։

*
* *

Հոկտեմբերի 2-ին՝ շաբաթի.—*Այսօր Վեհափառ Հայրապետն այցելեց ս. Գեղարդավանքը՝ մոտիկից ծանոթանալու կատարված շինարարական աշխատանքներին։*

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին գեր. տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, բարերարներ պարոնայք Հայկ Գավուքճյանը, Տատուր Տատուրյանը, Հարություն Թաթոսյանը՝ իրենց տիկնանց հետ, բարեշնորհ Հակոբ Գյոկչյան և Հովսեփ Հակոբյան սարկավագները։

*
* *

Հոկտեմբերի 6-ին՝ կիրակի.—Դ կիր. զկնի Սրբոյ Խաչի.

Այսօր Վեհափառ Հայրապետի գահակալության 13-րդ տարեդարձն է։ Այս առթիվ Մայր տաճարում պատարագեց և քարոզեց Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ գեր. տ. Տիրայր եպս. Մարտիկյանը։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Ս. պատարագին ներկա էին նաև ամերիկահայ պարոնայք Հայկ Գավուքճյանը, Տատուր Տատուրյանը, Հարություն Թաթոսյանը՝ իրենց տիկնանց հետ, և բազմաթիվ սփյուռքահայ ուխտավորներ։

Հավարտ ս. պատարագի կատարվեց հայրապետական մաղթանք՝ Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ։

Մաղթանքից հետո Մայր Աթոռի միաբանությունը և ուխտավորների մի հոծ բազմություն Վեհափառ Հայրապետին թափորով ուղեկցեցին Վեհարանի գահասրահը, ուր Մայր տաճարի լուսարարապետ գեր. տ. Հայկազուն

արքեպ. Աբրահամյանը բոլոր ներկաների և համայն հայ ժողովրդի անունից շնորհավորեց Վեհափառ Հայրապետի գահակալության 13-րդ տարեդարձը։

Վերջում Վեհափառ Հայրապետը Իր գոհունակությունը հայտնելով ներկայացված շնորհավորանքների համար, նշեց նաև, որ այս օրերին մայր հայրենիքի և սփյուռքի ողջ հայությունը համազգային ցնծությամբ նշում է Երևանի 2750-ամյա տարեդարձը։

Վերջում Վեհափառ Հայրապետը Իր օրհնությունը բաշխեց բոլոր ներկաներին։

Ժամը 3-ին, ի պատիվ հյուրերի, Վեհարանում տեղի ունեցավ ճաշկերույթ։

*
* *

Հոկտեմբերի 12-ին՝ շաբաթ.—Այսօր Վեհարանում Վեհափառ Հայրապետին այցելեցին շուրջ 200 ամերիկահայ ուխտավորներ, որոնք հրավիրված էին մայր հայրենիք Երևանի 2750-ամյակի կապակցությամբ։ Վեհափառ Հայրապետը ընդունեց նրանց և Իր օրհնությունը բաշխեց։

*
* *

Հոկտեմբերի 13-ին՝ կիրակի.—Ե կիր. զկնի Սրբոյ Խաչի.

Մայր տաճարում պատարագեց և քարոզեց հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը՝ «Նմանեալ Մովսէսի տէր վարդապետ. բերելով զգիր օրինաց ի Հայաստան աշխարհ» բնաբանով։

*
* *

Հոկտեմբերի 17-ին՝ հինգշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետին այցելեց հռչակավոր երգահան Արամ Խաչատրյանը։

Վեհափառ Հայրապետի և մեծ երգահանի միջև Վեհարանում տեղի ունեցավ ջերմ զրույց՝ սրտագին մթնոլորտում։

*
* *

Հոկտեմբերի 20-ին՝ կիրակի.—Զ կիր. զկնի Սրբոյ Խաչի.

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

*
* *

Հոկտեմբերի 23-ին՝ չորեքշաբթի.—Այսօր, հետ միջօրեի ժամը 2.30-ին, խմբով Վեհափառ Հայրապետին այցելեցին, Երևանի 2750-ամյակի առթիվ ուխտավորաբար մայր հայրենիքում գտնվող, հասարակական-մշակութային կազմակերպությունների և համալսարանների ներկայացուցիչներ՝ շուրջ 30 հոգի։ Այդ թվում՝ «Զարթոնք» թերթի խմբագիր Գերսամ Ահարոնյանը՝ Բեյրութից, «Արարատ» թերթի խմբագիր Ժիրայր Նաիրին՝ Բեյրութից, «Աշխարհ» թերթի խմբագիր Ավետիս Ալեքսանյանը՝ Փարիզից, հայտնի հայագետ պրոֆ. Ֆրեդերիկ Ֆեյդին՝ Փարիզից, ճարտարապետ Էդ. Ութուշյանը՝ Փարիզից, ԺԱՖ-ի նախագահ Գևորգ Սարաֆյանը՝ Փարիզից, հասարակական գործիչ Աստուր Կյուզելյանը՝ Լոնդոնից, պրոֆ. Ա. Գյոնչյանը՝ Մոնրեալից, երգչուհիներ Արփինե Փեհլիվանյանը և Սոնիկ Ղազարյանը՝ Բեյրութից, և այլ հրավիրյալներ Դամասկոսից, Բեյրութից, Բրազիլիայից։

Վեհափառ Հայրապետը ողջունեց նրանց ներկայությունը և խոսեց սփյուռքում ապրող հայ մտավորականությանը վիճակված թեև դժվարին, բայց քաղցր հայրենասիրական ու եկեղեցաշեն գործունեության մասին։

Ժամը 3-ին բոլոր հյուրերը ներկա եղան Վեհարանում իրենց պատվին տրված ճաշկերույթին։

*
* *

Հոկտեմբերի 24-ին՝ հինգշաբթի.—Այսօր Մայր Աթոռ այցելեց Սովետական Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը իր տիկնոջ հետ։ Նա հրավիրված էր Հայաստանի կառավարության կողմից մասնակցելու համար Երևանի 2750-ամյա հոբելյանական հանդիսություններին։

Հարգելի հյուրը եղավ նաև Վեհափառ Հայրապետի մոտ և ջերմ զրույց ունեցավ Նրա հետ՝ սրտագին մթնոլորտում։

*
* *

Հոկտեմբերի 25-ին՝ ուրբաթ.—Այսօր Վեհափառ Հայրապետին այցելեց հանրածանոթ գրող Մարիետա Շահինյանը։

Վեհափառ Հայրապետի և ականավոր գրողի միջև Վեհարանում տեղի ունեցավ ջերմ զրույց՝ սրտագին մթնոլորտում։

*
* *

Հոկտեմբերի 27-ին՝ կիրակի.—Է կիր. զկնի Սրբոյ Խաչի. Գիտ Խաչի.

Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Հակոբ քհն. Հակոբյանը։

ԵՐԵՎԱՆ. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՊԱԼԱՏԸ